ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» հունվարի 2026 թվականի N 3116-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 27/2 ՀԱՍՑԵԻ 217,13 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 892,77 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ «ՎԱ-ԱՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 27/2 հասցեի 217,13 (երկու հարյուր տասնյոթ ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հասարակական շինությունը և 892,77 (ութ հարյուր իննսուներկու ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08092026-08-0015 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 15-ի N 153-Ա որոշումը և «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սեդրակ Բարախյանի դիմումը (մուտքագրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 30-ին N 5805 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 27/2 հասցեի 217,13 (երկու հարյուր տասնյոթ ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով 3847760 (երեք միլիոն ութ հարյուր քառասունյոթ հազար յոթ հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով հասարակական շինությունը օտարել տվյալ կառույցն իրականացրած «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որպես սեփականություն:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոց 27/2 հասցեի 892,77 (ութ հարյուր իննսուներկու ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 3964351 (երեք միլիոն ինը հարյուր վաթսունչորս հազար երեք հարյուր հիսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որպես սեփականություն:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:

4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՎԱ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Սեդրակ Բարախյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850278 **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

2026թ. ք.Գյումրի